ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ղրղզստանի Հանրապետություն (Բիշքեկ) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը.

Նարեկ Հայրապետյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Ղրղզստանի Հանրապետություն (Բիշքեկ), 2019 թվականի դեկտեմբերի 9-12-ը ներառյալ

4. Հրավիրող կողմը.

Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն (ԿԱՀԿ) (OIE)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Էխինոկոկոզ հիվանդության վերաբերյալ Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի երկրների ԿԱՀԿ տարածաշրջանային աշխատաժողովին մասնակցություն

6. Քննարկված թեմաները.

Քննարկված թեմաներն առնչվում էին էխինոկոկոզ հիվանդության կանխարգելմանը, ախտորոշմանը, ռիսկերի գնահատմանը, վերլուծությանը, ինչպես նաև մոլեկուլային մակարդակով հետազոտությանը

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Աշխատաժողովի մասնակիցները տարբեր երկրներից ժամանած առողջապահության և անասնաբուժության բնագավառների ներկայացուցիչներ էին, ովքեր ներկայացրել են նյութեր էխինոկոկոզի բռնկման ժամանակ հնարավոր ռիսկերի գնահատման վերաբերյալ, որը հանդիսանում է կարևոր գործոն շրջակա միջավայրում վտանգավոր հարուցիչների տարածումը կանխելու համար: Փորձագետների կողմից բարձրացվել են մի շարք հարցեր՝ կապված էխինոկոկոզի նկատմամբ շների ճիճվաթափման, հետազոտության մեթոդների և այլնի մասին: Նշված հարցերի վերաբերյալ տրվել է մեկնաբանություն, որ Հայաստանի Հանրապետությունում շների ճիճվաթափությունը կատարվում է անասնաբուժական կլինիկաներում՝ տարեկան 3-4 անգամ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ձեռք է բերվել պայմանավորվածություն շարունակել ամենամյա հանդիպումները, որոնց ընթացքում կքննարկվեն տարբեր երկրների կողմից ընթացիկ տարում իրականացված աշխատանքները, ինչպես նաև հետագա անելիքներն՝ ուղղված էխինոկոկոզի կանխարգելմանը և ախտորոշման մեթոդներին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ շփումը հնարավորություն կտա խորացնել համագործակցությունը այլ մասնագիտական հաստատությունների հետ՝ ելնելով կենսանվտանգության և կենսապահովման միջազգային փորձից:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

16.12.2019թ.